**Արձանագրություն N 2**

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար սառցարանների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

30 ապրիլի 2021 թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Անի Ղարիբջանյանը, անդամներ՝ Մագդա Կարապետյանը, Ջուլիետտա Բաբայանը, և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

**Օրակարգ**
**ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/3 ծածկագրով գնման ընթացակարգի հատերի բացման, գնահատման և ամփոփման մասին**

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Անի Ղարիբջանյանը նիստը հայտարարեց բացված: Հայտերի վերջնաժամկետին հայտ է ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցը

| Հ/Հ | Մասնակցի անվանումը, հասցեն | (ԱԱՀ վճարող) կամ (ԱԱՀ չվճարող) | Գնային առաջարկ /ՀՀ դրամ առանց ԱԱՀ | Նախահաշվային գին /ՀՀ դրամ / |
|---|---|---|---|---|
| 1 | **Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի** (ք.Երևան, Երևան, Կոմիտասի 56) | (ԱԱՀ չվճարող) | 145 000 | 145 000 |
| 2 | **Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի** (ք.Երևան, Կոմիտասի 56) | (ԱԱՀ չվճարող) | 230 000 | 230 000 |

Հայտերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը պարզեց, որ 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին՝ մասնավորապես Հավելված 1-ում չորրդ պարբերության 2-րդ կետի 2-րդ ենթակետում մասնակցի անվան փոխարեն լրացված է հիմնադրի անունը, իսկ Հավելված 1"1-ը ընդհանրապես կցված չէ (որը պետք է հաստատված լինի էլեկտրոնային թվային ստորագրությամբ):

**Հանձնաժողովը որոշեց՝**

- ընթացակարգը կասեցնել մեկ աշխատանքային օրով, և Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի-ին առաջարկել սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունը:
- հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 04.05.2021թ. ժամը 10:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Անի Ղարիբջանյան

անդամներ _____ Մագդա Կարապետյան

_____ Ջուլիետտա Բաբայան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան